

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր - ենթածրագիր 2» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**



ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ __-ARM

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

(Հարկաբյուջետային կայունության

եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր 2-րդ Ենթածրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ

միջեւ

ԱՄՍԱԹԻՎ՝ 1 նոյեմբերի 2024թ.

ARM 55103

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Սովորական գործառնություններ)

—————ով թվագրված ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) եւ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ (ԱԶԲ) միջեւ

ՀԻՄՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԱՅՆ, ՈՐ՝

Ա) ԱԶԲ-ն Վարկառուից ստացել է 2024 թ.-ի սեպտեմբերի 30-ով թվագրված զարգացման քաղաքականության նամակ (Քաղաքականության նամակ), որով սահմանվում են այն կոնկրետ նպատակները եւ քաղաքականության գործողությունները, որոնք մշակվել են դիմակայուն, ներառական եւ ցածր ածխածնային տնտեսական աճի (Ծրագիր) ապահովմանը նպաստելու համար, ինչպես նկարագրված է սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածում

Բ) Ծրագիրը կազմված է ծրագրային մոտեցման երկրորդ ենթածրագրից, ինչպես նկարագրված է սույն Վարկային համաձայնագրի 1-ին հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում (Ծրագրային մոտեցում), եւ Վարկառուն դիմել է ԱԶԲ-ին՝ այս Ծրագրի համար վարկ ստանալու նպատակով. եւ

Գ) ԱԶԲ-ն համաձայնել է Վարկառուին վարկ տրամադրել ԱԶԲ-ի սովորական կապիտալի միջոցներից՝ սույն փաստաթղթում սահմանվող պայմաններով

ԵԼՆԵԼՈՎ ՎԵՐՈՇԱՐԱԴՐՅԱԼԻՑ՝ կողմերը համաձայնում են հետեւյալի մասին

ՀՈԴՎԱԾ I

Վարկավորման կանոնները, սահմանումները

Բաժին 1.01. ԱԶԲ-ի 2022 թ. հունվարի 1-ի Սովորական գործառնությունների վարկավորման կանոնները (Վարկավորման կանոններ) սույն Վարկային համաձայնագրի նկատմամբ սույնով կիրառելի են դառնում նույն ուժով եւ գործողությամբ այնպես, ինչպես եթե դրանք ամբողջությամբ ձեւակերպված լինեին սույն փաստաթղթում՝ միեւնույն ժամանակ ենթակա լինելով հետեւյալ փոփոխություններին

ա) 2.01 բաժնի (խզ) կետը հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագիր» եզրույթը նշանակում է ծրագիր, որի համար ԱԶԲ-ն համաձայնել է վարկ տրամադրել, ինչպես նկարագրված է Վարկային համաձայնագրում եւ այնքանով, որքանով այդ նկարագրությունը կարող է պարբերաբար փոփոխվել ԱԶԲ-ի եւ Վարկառուի միջեւ ձեռք բերված համաձայնությամբ.

բ) «Նախագիծ» եզրույթը Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում պետք է փոխարինվի «Ծրագիր» եզրույթով:

գ) 2.01 բաժնի (խը) կետը հանվել է եւ փոխարինվել հետեւյալով.

«Ծրագրի կատարման գործակալություն» եզրույթը նշանակում է այն մարմինը կամ մարմինները, որոնք պատասխանատու են Վարկային համաձայնագրին համապատասխան Ծրագրի կատարման համար.

դ) «Նախագծի կատարման գործակալություն» եզրույթը Վարկավորման կանոններում գործածվելու դեպքում պետք է փոխարինվի «Ծրագրի կատարման գործակալություն» եզրույթով:

ե) 6.01 բաժնի (բ) կետը հանվել է:

Բաժին 1.02. Սույն Վարկային համաձայնագրում գործածվելու դեպքում Վարկավորման կանոններով սահմանված մի շարք եզրույթներ ունեն դրանցում սահմանված համապատասխան նշանակությունը, եթե սույն փաստաթղթում չեն

փոփոխվել, կամ եթե համատեքստից այլ բան է բխում: Սույն Վարկային համաձայնագրում գործածվող լրացուցիչ եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

ա) «ՀԿԲ» նշանակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

բ) «Համաֆինանսավորման միջոցներ» նշանակում է Ծրագրով նախատեսված վարկային միջոցներից գոյացած եւ սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածի 4-րդ կետում մատնանշված՝ տեղական արժույթով միջոցները:

գ) «Դեպոզիտային հաշիվ» նշանակում է սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի 3-րդ կետում նշված հաշիվը:

դ) «Վարկի մասհանումների ձեռնարկ» նշանակում է ԱԶԲ-ի Վարկի մասհանումների ձեռնարկը (2022թ., պարբերաբար կատարվող փոփոխություններով):

ե) «ԷՆ» նշանակում է Վարկառուի Էկոնոմիկայի նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

զ) «ՇՄՆ» նշանակում է Վարկառուի Շրջակա միջավայրի նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

է) «ՖՆ» նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

ը) «ԱՆ» նշանակում է Վարկառուի Արդարադատության նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

թ) «ՔՄՄՇ» նշանակում է քաղաքականության մշակման եւ մշտադիտարկման շրջանակը, որը միավորում է նախագծման եւ մշտադիտարկման շրջանակը եւ քաղաքականության մատրիցը, եւ որը սահմանում է Քաղաքականության գործողությունները, որոնք համաձայնեցվել են Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ:

ժ) «Քաղաքականության գործողություններ» նշանակում է Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ համաձայնեցված քաղաքականության այն գործողությունները, որոնք Ծրագրի շրջանակներում Վարկառուի կողմից կատարվել են կամ պետք է կատարվեն՝ ՔՄՄՇ-ի համաձայն:

ժա) Վարկավորման կանոնների նպատակներով եւ դրանցով սահմանված իմաստով՝ «Ծրագրի կատարման գործակալություն» նշանակում է ՖՆ-ն կամ վերջինիս՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ, որը պատասխանատու է Ծրագրի կատարման համար, եւ

ժբ) «Ծրագրի իրականացման գրասենյակներ» նշանակում է ՀԿԲ-ն, ԷՆ-ն, ՇՄՆ-ն եւ ԱՆ-ն կամ վերջիններիս՝ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած իրավահաջորդ, որը պատասխանատու է Ծրագրի՝ իրենց համապատասխանող մասերի իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ II

Վարկը

Բաժին 2.01. ա) ԱԶԲ-ն համաձայնում է ԱԶԲ-ի սովորական կապիտալ միջոցներից Վարկառուին տրամադրել ութսունինը միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար եվրո (€89,469,000), եւ այդ գումարը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Վարկային համաձայնագրի 2.06 բաժնի դրույթների համաձայն:

բ) Վարկի մայր գումարի մարման ժամկետը 12 տարի է, իսկ արտոնյալ ժամանակահատվածը՝ սույն բաժնի «գ» ենթակետի համաձայն:

գ) Սույն բաժնի «բ» ենթակետում գործածված «արտոնյալ ժամանակահատված» եզրույթը նշանակում է մայր գումարի առաջին վճարման օրվան նախորդող ժամանակահատվածը՝ սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածով սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

Բաժին 2.02. Վարկառուն ժամանակ առ ժամանակ ԱԶԲ-ին վճարում է

տոկոսներ, որոնք հաշվարկվում են առհանված եւ չվճարված վարկի մայր գումարի դիմաց՝ տոկոսների հաշվեգրման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանված այն դրույքաչափով, որը հավասար է հետեւյալի գումարին.

ա) ԵՎՐԻԲՈՐ, եւ

բ) 0.60%՝ Վարկավորման կանոնների 3,02 բաժնով սահմանված կարգով, հանած 0.10%-ը՝ Վարկավորման կանոնների 3,03 բաժնով սահմանված կարգով:

Բաժին 2.03. Վարկառուն վճարում է պարտավորավճար՝ տարեկան 0.15%-ի չափով: Այդ վճարը հաշվեգրվում է Վարկի ամբողջ գումարի վրա (հանած ժամանակ առ ժամանակ առհանվող գումարները), որը սկսում է սույն Վարկային համաձայնագրի կնքման օրվանից 60 օր հետո:

Բաժին 2.04. Վարկի տոկոսագումարները եւ այլ վճարներ պետք է կատարվեն կիսամյակային պարբերականությամբ՝ ամեն տարվա մարտի 15-ին եւ սեպտեմբերի 15-ին:

Բաժին 2.05. Վարկառուն Վարկային հաշվից առհանված՝ վարկի մայր գումարը մարում է սույն Վարկային համաձայնագրի 2-րդ հավելվածի դրույթների համաձայն:

Բաժին 2.06. ա) Պարտքի ողջամիտ կառավարումը դյուրացնելու նպատակով Վարկառուն կարող է ցանկացած ժամանակ դիմել վարկի պայմաններում հետեւյալ փոփոխությունները կատարելու խնդրանքով.

(i) առհանված եւ չվճարված կամ չառհանված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի արժույթի փոխարինումը հաստատված արժույթով,

(ii) առհանված եւ չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի նկատմամբ կիրառվող բազային դրույքաչափի փոփոխումը լողացող դրույքաչափից ֆիքսված դրույքաչափի կամ հակառակը, եւ

(iii) առհանված եւ չվճարված վարկի ամբողջ մայր գումարի կամ դրա ցանկացած մասի նկատմամբ կիրառվող լողացող դրույքաչափի սահմանաչափերի

սահմանումը՝ նշված լողացող դրույքաչափի համար տոկոսադրույքի սահմանային շեմը կամ տոկոսադրույքի առավելագույն եւ նվազագույն շեմերը (տոկոսային միջանցք) սահմանելու միջոցով:

բ) Սույն բաժնի «ա» ենթակետի համաձայն հայցված եւ ԱԶԲ-ի համար ընդունելի ցանկացած փոփոխում դիտարկվում է որպես Փոխարկում՝ Վարկավորման կանոնների 2.01 բաժնի «ե» կետով սահմանված կարգով եւ ուժի մեջ է մտնում Վարկավորման կանոնների V հոդվածի դրույթների եւ Փոխարկման ուղեցույցի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III

Վարկային միջոցների օգտագործումը

Բաժին 3.01. Վարկառուն ապահովում է, որ Վարկային միջոցներն օգտագործվեն Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով՝ Վարկային համաձայնագրի դրույթների համաձայն:

Բաժին 3.02. Վարկային միջոցներն առհանվում են սույն Վարկային համաձայնագրի 3-րդ հավելվածի դրույթների համաձայն, ընդ որում, այդ հավելվածը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ համաձայնությամբ:

Բաժին 3.03. Վարկավորման կանոնների 9.02 բաժնի նպատակներով՝ Վարկի փակման օրը 2025թ-ի հունիսի 30-ն է կամ ցանկացած այլ օր, որը ժամանակ առ ժամանակ կարող է համաձայնեցվել Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ:

ՀՈԴՎԱԾ IV

Հատուկ պարտավորությունները

Բաժին 4.01. Ծրագիրն իրականացնելիս Վարկառուն կատարում է սույն Վարկային համաձայնագրի 4-րդ հավելվածում սահմանված բոլոր պարտավորությունները կամ ապահովում է դրանց կատարումը:

Բաժին 4.02. Վարկավորման կանոնների 7.01 եւ 7.04 բաժիններում նշվող տեղեկությունների եւ հաշվետվությունների շրջանակներում Վարկառուն ԱԶԲ-ին է ներկայացնում կամ ապահովում, որ ԱԶԲ-ին ներկայացվեն բոլոր այն հաշվետվությունները եւ տեղեկությունները, որոնք ԱԶԲ-ն ողջամտորեն կպահանջի՝ i) Համաֆինանսավորման միջոցների եւ դրանց օգտագործման վերաբերյալ եւ ii) Ծրագրի իրականացման, այդ թվում՝ թիրախների ապահովման եւ Քաղաքականության գործողությունների իրականացման վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ V

Ուժի մեջ մտնելը

Բաժին 5.01. Վարկավորման կանոնների 10.04 բաժնի նպատակներով՝ Վարկային համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օր է սահմանվում սույն Վարկային համաձայնագիրը կնքելու օրվանից հետո 90-րդ օրը:

ՀՈԴՎԱԾ VI

Այլ դրույթներ

Բաժին 6.01. Վարկավորման կանոնների 12.02-ի բաժնի նպատակներով՝ Վարկառուի Ֆինանսների նախարարը նշանակվում է որպես Վարկառուի ներկայացուցիչ:

Բաժին 6.02. Վարկավորման կանոնների 12.01 բաժնի նպատակներով ներկայացվում են հետեւյալ հասցեները.

Վարկառուի կողմից՝

Ֆինանսների նախարարություն

Մելիք-Ադամյան 1

Երեւան, 0010, Հայաստան

Ֆաքս՝

(374 11) 800-132

ԱԶԲ-ի կողմից՝

Ասիական զարգացման բանկ

6 ԱԶԲ պողոտա

Մանդալույոնգ քաղաք

1550 Մետրո Մանիլա

Ֆիլիպիններ

Ֆաքս՝

(632) 8636-2444

(632) 8636-2424

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ սույն Համաձայնագրի կողմերը, հանդես գալով պատշաճ կերպով լիազորված իրենց ներկայացուցիչների միջոցով, իրենց անունից ստորագրեցին սույն Վարկային համաձայնագիրը վերոնշյալ ամսաթվին եւ տարում եւ ապահովեցին դրա փոխանցումը ԱԶԲ-ի գլխամասային գրասենյակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վահե Հովհաննիսյանի կողմից՝
[Անունը եւ պաշտոնը]

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ

Դոնալդ Լամբերտի կողմից՝
[Անունը եւ պաշտոնը]

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Ծրագրի նկարագրությունը

1. Ծրագրային մոտեցման հիմնական նպատակն է խորացնել ֆինանսական շուկաները եւ ուժեղացնել հարկաբյուջետային կառավարումն ու կայունությունը Հայաստանում: Ծրագրային մոտեցումը կազմված է երեք ենթածրագրերից, եւ Ծրագիրը դրա երկրորդ ենթածրագիրն է:

2. Ծրագրի շրջանակը ներառում է ա) հարկաբյուջետային կառավարման, պետական պարտքի եւ հարկաբյուջետային ռիսկերի կառավարման ուժեղացումը եւ ենթակառուցվածքային ներդրումների կայունությունը, բ) պետական արժեթղթերի շուկայի եւ փողի շուկայի ենթակառուցվածքի բարելավումը, եւ գ) ֆինանսական գործիքների եւ ներդրողների բազայի ընդլայնումը եւ կորպորատիվ թափանցիկության բարելավումը: Ծրագիրն ավելի մանրամասն կերպով նկարագրվում է Քաղաքականության նամակում եւ ՔՄՄՇ-ում:

3. Ծրագիրն ավարտված է 2024 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Մարման ժամանակացույցը

1. Ստորեւ բերված աղյուսակում ներկայացվում են վարկի մայր գումարի վճարման ամսաթվերը եւ մայր գումարի վճարման յուրաքանչյուր օր վճարման ենթակա՝ վարկի ընդհանուր մայր գումարի տոկոսները (Վճարման մասնաբաժին): Եթե վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված են, ապա վարկի մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը ԱԶԲ-ի կողմից սահմանվում է՝ բազմապատկելով ա) մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ առհանված եւ չմարված վարկի ընդհանուր մայր գումարը, բ) մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրվա համար Վճարման մասնաբաժինը, իսկ մարման ենթակա այդ գումարն ըստ անհրաժեշտության

ճշգրտվում է սույն հավելվածի 4-րդ կետում նշված այն գումարները նվազեցնելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

<u>Վճարման ամսաթիվը</u>	<u>Վճարման մասնաբաժինը</u> (տոկոսային արտահայտությամբ)
Մարտի 15, 2028թ	4.500000
Սեպտեմբերի 15, 2028թ	4.500000
Մարտի 15, 2029թ	4.500000
Սեպտեմբերի 15, 2029թ	4.500000
Մարտի 15, 2030թ	4.500000
Սեպտեմբերի 15, 2030թ	4.500000
Մարտի 15, 2031թ	4.500000
Սեպտեմբերի 15, 2031թ	4.500000
Մարտի 15, 2032թ	4.500000
Սեպտեմբերի 15, 2032թ	4.500000
Մարտի 15, 2033թ	4.500000
Սեպտեմբերի 15, 2033թ	4.000000
Մարտի 15, 2034թ	4.000000
Սեպտեմբերի 15, 2034թ	4.000000
Մարտի 15, 2035թ	4.000000
Սեպտեմբերի 15, 2035թ	4.000000
Մարտի 15, 2036թ	4.000000
Սեպտեմբերի 15, 2036թ	4.000000
Մարտի 15, 2037թ	4.000000
Սեպտեմբերի 15, 2037թ	4.000000
Մարտի 15, 2038թ	4.000000
Սեպտեմբերի 15, 2038թ	3.500000
Մարտի 15, 2039թ	3.500000
Սեպտեմբերի 15, 2039թ	3.500000
ԸՆԴՀԱՆՈՒՐ	100.000000

2. Եթե վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ

վարկային միջոցներն ամբողջությամբ առհանված չեն, ապա վարկի մայր գումարի վճարման յուրաքանչյուր օրվա դրությամբ Վարկառուի կողմից մարվող վարկի մայր գումարի չափը սահմանվում է հետևյալ կերպ.

ա) Վարկի մայր գումարի առաջին վճարման օրվա դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է այդ օրվա դրությամբ առհանված եւ չվճարված գումարը՝ սույն հավելվածի 1-ին կետի համաձայն, եւ

բ) վարկի մայր գումարի առաջին վճարման օրվանից հետո ցանկացած առհանված գումար վերադարձվում է այդ առհանմանը հաջորդող՝ վարկի մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը՝ ԱԶԲ-ի կողմից սահմանված գումարների չափով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սույն հավելվածի 1-ին պարբերության աղյուսակում նշված՝ վարկի մայր գումարի տվյալ վճարման օրվա դրությամբ սկզբնական վճարման մասնաբաժինն է (Սկզբնական վճարման մասնաբաժին), իսկ հայտարարը՝ այդ օրը կամ դրանից հետո ընկնող՝ վարկի մայր գումարի վճարման օրերի մնացած բոլոր Սկզբնական վճարման մասնաբաժինների ընդհանուր գումարն է, ընդ որում, մարման ենթակա այդ գումարները, ըստ անհրաժեշտության, ճշգրտվում են սույն հավելվածի 4-րդ կետում նշված ցանկացած այնպիսի գումար նվազեցնելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. Վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրը միայն վճարման ենթակա մայր գումարները հաշվարկելու նպատակներով վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվան նախորդող 2 օրացուցային ամիսների ընթացքում կատարված առհանումները համարվում են առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվա դրությամբ առհանված եւ չվճարված, եւ ենթակա են մարման՝ առհանման օրվան հաջորդող՝ վարկի մայր գումարի երկրորդ վճարման օրվանից սկսած մայր գումարի յուրաքանչյուր վճարման օրը:

4. Անկախ սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում նախատեսված

դրույթներից՝ վարկի մայր գումարի առհանձնված ամբողջ գումարը կամ դրա մի մասը հաստատված արժույթի փոխարկելու դեպքում նշված հաստատված արժույթի՝ այդ կերպ փոխարկված գումարի չափը, որը ենթակա է մարման Փոխարկման ժամանակահատվածի ընթացքում վարկի մայր գումարի ցանկացած վճարման օրվա դրությամբ, սահմանվում է ԱԶԲ-ի կողմից՝ նշված փոխարկումից անմիջապես առաջ գործող արժույթով արտահայտված գումարը բազմապատկելով կա՛մ ա) արժույթի փոխարժեքով, որն արտացոլում է տվյալ փոխարկման հետ կապված արժույթի հեջավորման գործարքի շրջանակներում ԱԶԲ-ի կողմից վճարվելիք՝ նշված Հաստատված արժույթով մայր գումարները, կա՛մ ii) Սահմանված տոկոսադրույքի (Screen Rate) փոխարժեքի բաղադրիչով, եթե ԱԶԲ-ն այդպիսի որոշում կայացնի՝ Փոխարկման ուղեցույցին համապատասխան:

5. Եթե վարկի մայր գումարի առհանձնված եւ չվճարված մասը պարբերաբար արտահայտվում է վարկի գումարի՝ մեկից ավելի արժույթներով, ապա սույն հավելվածի դրույթները կիրառվում են վարկի յուրաքանչյուր արժույթով արտահայտված գումարի համար առանձին այնպես, որ յուրաքանչյուր գումարի համար մարման առանձին ժամանակացույց կազմվի:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Վարկային միջոցների առհանումը

1. Բացառությամբ այն դեպքերի, որոնք սահմանված են սույն հավելվածում, կամ երբ ԱԶԲ-ն այլ համաձայնության է գալիս, Վարկային միջոցները պետք է մասհանվեն Վարկի մասհանումների ձեռնարկի համաձայն:

2. Վարկային հաշվից առհանումների համար Վարկառուն ԱԶԲ-ին պետք է ներկայացնի հայտ, որը պետք է լինի ԱԶԲ-ի համար բավարար ձեւով:

3. ա) Նախքան Վարկային հաշվից առհանումներ կատարելու համար առաջին հայտը ԱԶԲ-ին ներկայացնելը՝ Վարկառուն ՀԿԲ-ում պետք է բացի հաշիվ (Դեպոզիտային հաշիվ), որին պետք է փոխանցվեն Վարկային հաշվից կատարվող բոլոր առհանումները: Դեպոզիտային հաշիվը բացվում, կառավարվում եւ լուծարվում է Վարկառուի կիրառելի կարգավորումների եւ ընթացակարգերի համաձայն:

բ) Պետք է վարվեն Դեպոզիտային հաշվի հետ կապված առանձին հաշիվներ եւ գրառումներ՝ ԱԶԲ-ի համար ընդունելի հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն: ԱԶԲ-ի պահանջով Վարկառուն Դեպոզիտային հաշվի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ կանցկացնի անկախ աուդիտորների կողմից, որոնց որակավորումը, փորձը եւ կոմպետենտությունն ընդունելի կլինեն ԱԶԲ-ի համար՝ աուդիտի միջազգային ստանդարտների կամ ԱԶԲ-ի համար ընդունելի ազգային համարժեք ստանդարտների համաձայն: Դրանք պատրաստելուց անմիջապես հետո, սակայն ամեն դեպքում ԱԶԲ-ի կողմից այդ պահանջը ներկայացնելուց 6 ամսվանից ոչ ուշ, աուդիտի ենթարկված այդ ֆինանսական հաշվետվությունների պատճենները եւ ֆինանսական հաշվետվությունների մասին աուդիտորների կարծիքը՝ անգլերեն, պետք է ներկայացվեն ԱԶԲ-ին:

4. Վարկային միջոցները չպետք է առհանվեն սույն հավելվածի առդիրում ներկայացված որեւէ ապրանք ֆինանսավորելու համար:

5. Չհակասելով սույն Վարկային համաձայնագրի ցանկացած այլ դրույթի եւ եթե ԱԶԲ-ն այլ բան չի համաձայնում, մյուս դեպքերում Վարկային հաշվից միջոցների առհանում չի կատարվում, եթե i) Վարկառուն չի ապահովել վարկային միջոցների տրամադրման համար Քաղաքականության գործողությունները, եւ ii) Քաղաքականության այդ միջոցառումներն ուժի մեջ չեն:

Բացառումների [արգելված ապրանքների] ցանկ

Վարկային միջոցներից որեւէ առհանում չի կատարվում հետեւյալի համար.

(i) ՄԱԿ-ի Միջազգային առեւտրի ստանդարտ դասակարգում, 4-րդ վերանայման (աղյուսակ) հետեւյալ խմբերում կամ ենթախմբերում կամ ՄԱԿ-ի Միջազգային առեւտրի ստանդարտ դասակարգման հետագա հրատարակություններում ԱԶԲ-ի կողմից նշված ցանկացած հետագա խմբում կամ ենթախմբում ընդգրկված ապրանքների ծախսեր, որոնց մասին ԱԶԲ-ն տեղեկացնում է Վարկառուին.

Աղյուսակ. Արգելված ապրանքներ

Գլուխ	Դիրք	Ապրանքի նկարագիրը
112		Ոգելից խմիչքներ
121		Ծխախոտ՝ չմշակված. ծխախոտի թափոններ
122		Ծխախոտ՝ վերամշակված (ծխախոտի փոխարինիչներ պարունակող կամ չպարունակող)
525		Ռադիոակտիվ եւ հարակից նյութեր
667		Մարգարիտներ եւ թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր՝ չմշակված կամ մշակված
718	718.7	Միջուկային ռեակտորներ եւ դրանց մասերը, վառելիքի տարրեր (քարթրիջներ), չճառագայթված, միջուկային ռեակտորների համար
728	728.43	Սարքավորումներ՝ ծխախոտի պատրաստման եւ արտադրության համար, այլ տեղ չնշված
897	897.3	Ոսկերչական իրեր՝ պատրաստված ոսկուց, արծաթից կամ պլատինի խմբի մետաղներից (բացառությամբ ձեռքի ժամացույցների եւ ժամացույցների պատյանների), ինչպես նաեւ ոսկուց կամ արծաթագործական արտադրանքներից (ներառյալ՝ թանկարժեք քարերը շրջանակի մեջ)
971		Ոսկի՝ ոչ դրամական (առանց ոսկու եւ խտանյութերի)

Աղբյուր՝ ՄԱԿ-ի Միջազգային առեւտրի ստանդարտ դասակարգում, 4-րդ վերանայում

- (ii) Պայմանագրով մատակարարված ապրանքների ծախսեր, որոնք որեւէ ազգային կամ միջազգային ֆինանսական հաստատություն կամ գերատեսչություն ֆինանսավորել կամ համաձայնել է ֆինանսավորել, ներառյալ՝ ցանկացած պայմանագիր, որը ֆինանսավորվում է ԱԶԲ-ից որեւէ վարկի կամ դրամաշնորհի շրջանակներում.
- (iii) Ռազմական բնույթի կամ ռազմական նշանակության ապրանքների կամ պերճանքի առարկաների համար կատարված ծախսեր.
- (iv) Թմրանյութերի համար ծախսեր.
- (v) Ծախսեր՝ շրջակա միջավայրի համար վտանգավոր ապրանքների համար, որոնց արտադրությունը, օգտագործումը կամ ներմուծումն արգելված են Վարկառուի օրենքներով կամ միջազգային համաձայնագրերով, որոնց կողմ է Վարկառուն. եւ
- (vi) ՄԱԿ-ի կանոնադրության VII գլխի համաձայն՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից ընդունված որոշման համաձայն՝ Վարկառուի կողմից արգելված ցանկացած վճարման հետ կապված ծախսեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ծրագրի իրականացումը եւ այլ հարցեր

Իրականացման մեխանիզմները

1. ՖՆ-ն հանդես է գալիս որպես Ծրագրի կատարման գործակալություն եւ պատասխանատու է Ծրագրի ընդհանուր իրականացման համար, այդ թվում՝ քաղաքականության գործողությունների, միջոցների հատկացման եւ գրառումների պահման գործընթացների հետ համապատասխանության ապահովման համար: ՀԿԲ-ն, ԷՆ-ն, ՇՄՆ-ն եւ ԱՆ-ն հանդես են գալիս որպես Ծրագրի իրականացման գրասենյակներ՝ Ծրագրի համապատասխան բաղադրիչների համար:

Քաղաքականության գործողությունները եւ երկխոսությունը

2. Վարկառուն ապահովում է, որ Ծրագրի շրջանակներում ներդրված Քաղաքականության բոլոր գործողությունները շարունակեն գործել Ծրագրային մոտեցման ապահովման ընթացքում:

3. Վարկառուն ԱԶԲ-ին տեղեկացնում է այլ բազմակողմ եւ երկկողմ աջակցության գործակալությունների հետ քաղաքականության քննարկումների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ծրագրի իրականացման վրա, եւ ԱԶԲ-ին հնարավորություն է տալիս մեկնաբանել քաղաքականության վերաբերյալ ցանկացած առաջարկ: Վարկառուն պետք է հաշվի առնի ԱԶԲ-ի տեսակետները՝ նախքան այդպիսի որեւէ առաջարկ վերջնականացնելը եւ իրականացնելը:

Համաֆինանսավորման միջոցների օգտագործումը

4. Վարկառուն ապահովում է, որ Համաֆինանսավորման միջոցներն օգտագործվեն Ծրագրի նպատակներին համապատասխան կոնկրետ ծրագրերի եւ գործողությունների իրականացումը ֆինանսավորելու համար:

Կառավարումը եւ հակակոռուպցիոն միջոցառումները

5. Վարկառուն, Ծրագրի կատարման գործակալությունը եւ Ծրագրի իրականացման գրասենյակները՝ ա) պետք է առաջնորդվեն ԱԶԲ-ի Հակակոռուպցիոն քաղաքականությամբ (1998թ., մինչ օրս կատարված փոփոխություններով) եւ ընդունեն, որ ԱԶԲ-ն իրավունք ունի ուղղակիորեն կամ իր գործակալների միջոցով քննելու Ծրագրին առնչվող՝ կոռուպցիայի, խարդախության, հանցավոր համաձայնության կամ հարկադրանքի ցանկացած ենթադրյալ գործելակերպ, եւ բ) համագործակցեն ցանկացած այդպիսի քննության շրջանակներում եւ տրամադրեն անհրաժեշտ ողջ աջակցությունն այդ քննությունը բավարար կերպով ավարտին հասցնելու համար:

Մշտադիտարկումը եւ ուսումնասիրությունը

5. Վարկառուն ապահովում է, որ ա) Ծրագրի իրականացման գրասենյակները պարբերաբար ուսումնասիրություններ նախաձեռնեն Ծրագրի շրջանակը, իրականացման մեխանիզմները, ընթացքը, ձեռքբերումները եւ ազդեցությունը, ինչպես նաեւ Ծրագրային մոտեցումը գնահատելու համար, եւ բ) Ծրագրի կատարման գործակալությունը պատասխանատու լինի մշտադիտարկման բոլոր տվյալները պահելու եւ Ծրագրի օգուտները գնահատելու համար: ԱԶԲ-ի կողմից Ծրագրի եւ դրա ազդեցությունների ստուգումն ու մշտադիտարկումը դյուրացնելու համար Վարկառուն ժամանակին տրամադրում է համապատասխան ոլորտային, մակրոտնտեսական եւ ֆինանսական տվյալներ եւ համապատասխան տեղեկություններ այնպիսի մանրամասներով, որոնք ԱԶԲ-ն կարող է ողջամտորեն պահանջել: Ուսումնասիրությունները հիմք են դառնում հետագա բարեփոխումների եւ միջոցառումների վերաբերյալ Վարկառուի եւ ԱԶԲ-ի միջեւ քննարկումների համար, որոնք կարող են անհրաժեշտ կամ ցանկալի լինել Ծրագրային մոտեցման շրջանակներում: